ՎԴ/0717/05/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28 ապրիլի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեղնյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Արթուր Պողոսյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/0717/05/25 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 9-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Արտակ Գալստյանը 2025 թվականի հունվարի 20-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, հրաման ընդունելուն՝ Արտակ Մերուժանի Գալստյանին ամբողջ չվճարված տարիների ընթացքում՝ սկսած 2014 թվականի մայիսի 19-ից մինչև 2023

թվականի սեպտեմբերի 2-ը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության և Լեռնային Ղարաբաղի տարածքում մարտական գործողությունների մասնակիցների համար սահմանված պարգևավճարը՝ ամսական՝ 5,000 ՀՀ դրամի չափով, ընդհանուր՝ 580,000 ՀՀ դրամը, հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի մարտի 26-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի ապրիլի 11-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի մայիսի 2-ի թիվ ՀՕ-220-Ն օրենքի 1-ին հոդվածին, 37-րդ հոդվածի 2-րդ մասին՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի մարտի 26-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Տվյալ դեպքում Արտակ Մերուժանի Գալստյանը հայցադիմումով խնդրել է «1.Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, ընդունել հրաման՝ հաշվարկել և վճարել Արտակ Մերուժանի*

Գալստյանին ամբողջ չվճարված տարիների ընթացքում սկսած 2014 թվականի մայիսի 19-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 2-ը՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության և Լեռնային Ղարաբաղի տարածքում մարտական գործողությունների մասնակիցների համար սահմանված պարգևավճարը, ամսեկան՝ 5,000 ՀՀ դրամի չափով, ընդհանուր՝ 580,000 ՀՀ դրամը», այսինքն՝ հայցվորի պահանջը համապատասխանում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, քանի որ հանդիսանում է հանրային ծառայություն իրականացնելու հետ կապված վեճ:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը եզրահանգում է, որ սույն հայցադիմումի պահանջն այլևս ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, ուստի սույն գործը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան, իսկ սույն հայցադիմումով պատասխանողի հասցեն է՝ ք.Երևան, Բագրևանդի 5»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերին, 210-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածին, 77-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասին, մինչև 2020 թվականի փետրվարի 22-ը գործած խմբագրությամբ 7-րդ հոդվածի 7-րդ մասին, 178-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին, 1.1-ին կետերին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 22-23:

մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին, մինչև 2021 թվականի հոկտեմբերի 23-ը գործած խմբագրությամբ 3-րդ հոդվածի 3-րդ մասին, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «դ» ենթակետին, նույն հոդվածի 7-րդ մասին, ՀՀ Կառավարության՝ 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշման ընդհանուր դրույթների 1-ին մասին, նույն որոշման հավելվածի 1-ին գլխի 4-րդ կետին, 2-րդ գլխի 5-րդ կետի 6-րդ ենթակետին, 3-րդ գլխի 12-րդ կետին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱՔԴ/0433/02/11, 2013 թվականի հուլիսի 4-ի թիվ ՎԴ/2087/05/12, 2014 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԵԿԴ/3246/02/13, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) Առաջին հայացքից կարող է թվալ, որ Որոշումը միտված է զինծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին տրվող պարգևավճարներին, որպիսիք պայմանավորված են վերջիններիս կարգավիճակով և հանդիսանում են աշխատանքային իրավահարաբերությունների հետևանք: Որոշման ընդհանուր ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պարգևավճարի «շահառու» են հանդիսանում ի թիվս այլոց հետևյալ սուբյեկտները՝ մարտական գործողությունների ժամանակ զոհվածները, պարտադիր զինվորական ծառայության ընթացքում զոհվածները, Հայրենական մեծ պատերազմում զոհվածները, մարտական գործողությունների ժամանակ անհայտ կորածները, նրանց ընտանիքի անդամները, ծառայողական պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած անձինք, ՀՀ ազգային հերոսները, Մարտական*

հաչ շքանշանով պարգևատրված անձինք, ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցները:

Դատարանի գնահատմամբ վերոնշյալ սուբյեկտներին տրվող պարգևավճարները, թեև որպես այդպիսին (պարգևավճար) դրա ուղղակի օրենսդրական ձևակերպմանը, հանդիսանում են պետության կողմից տրվող սոցիալական աջակցություն, որոնք ամենևին պայմանավորված չեն այդ սուբյեկտների և պետության՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու կամ նախկինում նման հարաբերությունների մեջ գտնված լինելու հանգամանքով: Որոշ դեպքերում որոշակի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելը՝ այդ թվում նաև պետության հետ, սուբյեկտին ընդամենը դարձնում է Որոշմամբ սահմանված աջակցությունը ստանալու «շահառու»:

Սույն գործի փաստական տվյալների համաձայն՝ հայցվորը, նախկինում աշխատելով ՀՀ Պաշտպանության նախարարությունում, ունենալով կենսաթոշակի իրավունք և հանդիսանալով մարտական գործողությունների մասնակից, դիմել է ՀՀ Պաշտպանության նախարարությանը Որոշմամբ իրեն հասանելիք պարգևավճարը (Դատարանի գնահատմամբ՝ սոցիալական աջակցությունը) ստանալու նպատակով և ստացել է մերժում:

Ընդհանրացնելով վերոնշյալ իրավական մտրահանգումները սույն գործի փաստական տվյալների հետ, Դատարանը գտնում է, որ հայցվորի պահանջը չի ներառվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով կարգավորվող «Առանձին աշխատանքային վեճերով վարույթը» վերտառությամբ աշխատանքային վեճերի քննության ենթակա գործերի շարքում:

(…)

Արդյունքում՝ Դատարանը եզրահանգում է, որ կողմերի միջև ծագել են ոչ թե քաղաքացիաիրավական (մասնավոր), այլ՝ հանրային իրավահարաբերություններ, հետևաբար՝ ներկայացված հայցադիմումը ենթակա է քննության ՀՀ վարչական դատարանի կողմից:

(…)

Վերոգրյալի լույսի ներքո, հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան վերահասցեագրված թիվ ՎԴ/0717/05/25 գործի ենթակայության վերաբերյալ արտահայտած անհամաձայնությունը, Դատարանը գտնում է, որ առկա է թիվ ՎԴ/0717/05/25 գործի ենթակայությունը որոշելու նպատակով գործը ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու անհրաժեշտություն»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/0717/05/25 գործն ըստ Արտակ Գալստյանի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, հրաման ընդունելուն՝ Արտակ Մերուժանի Գալստյանին ամբողջ չվճարված տարիների ընթացքում՝ սկսած 2014 թվականի մայիսի 19-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 2-ը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության և Լեռնային Ղարաբաղի տարածքում մարտական գործողությունների մասնակիցների համար սահմանված պարգևավճարը՝ ամսական՝ 5,000 ՀՀ դրամի չափով, ընդհանուր՝ 580,000 ՀՀ դրամը, հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 30-43:

ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (. . .) 10-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել»:*

ՀՀ Կառավարության՝ 2021 թվականի փետրվարի 4-ի՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների ամենամսյա պարգևավճարի չափերը,

պարգևավճար նշանակելու և վճարելու կարգը, պարգևավճար նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 141-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ *«Պարգևավճարի իրավունք ունեն զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող հետևյալ կատեգորիաների անձինք՝ (…)*

6) Հայաստանի Հանրապետության պաշտպանության կամ Լեռնային Ղարաբաղի տարածքում մարտական գործողությունների մասնակիցները՝ 5000 դրամ. (…)»:

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Հարկ է նշել, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված էին նաև հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Մինչդեռ, 2025 թվականի հունվարի 1-ից օրենսդիրը նշված գործերի քննությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քննությանը՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը թողնելով միայն մինչև 2025 թվականի հունվարի 1-ը նշված վեճերով ներկայացված

հայցադիմումները, որոնք արդեն իսկ վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից:

Այսինքն՝ 2025 թվականի հունվարի 1-ից հետո ՀՀ վարչական դատարանն իրավասու է քննելու հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված միայն այն վեճերը, որոնց վերաբերյալ ներկայացված հայցադիմումները ՀՀ վարչական դատարանը վարույթ է ընդունել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Արտակ Գալստյանը 2025 թվականի հունվարի 20-ին հայցադիմում է ներկայացրել (փոստին է հանձնել) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, հրաման ընդունելուն՝ Արտակ Մերուժանի Գալստյանին ամբողջ չվճարված տարիների ընթացքում՝ սկսած 2014 թվականի մայիսի 19-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 2-ը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության և Լեռնային Ղարաբաղի տարածքում մարտական գործողությունների մասնակիցների համար սահմանված պարգևավճարը՝ ամսական՝ 5,000 ՀՀ դրամի չափով, ընդհանուր՝ 580,000 ՀՀ դրամը, հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին[3],

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի մարտի 26-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվորի պահանջը համապատասխանում է մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, քանի որ հանդիսանում է հանրային ծառայություն իրականացնելու հետ կապված վեճ: Հետևաբար, հայցադիմումի պահանջն այլևս ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին, ուստի սույն գործը ենթակա է վերահասցեագրման ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի առաջին ատյանի

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:

ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի համաձայն՝ հայցը ներկայացվում է պատասխանողի հաշվառման (գտնվելու) վայրի դատարան, իսկ հայցադիմումով պատասխանողի հասցեն է՝ ք.Երևան, Բագրևանդի 5[4],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի ապրիլի 9-ի որոշմամբ գտել է, որ որոշմամբ նշված սուբյեկտներին տրվող պարգևավճարները, թեև որպես այդպիսին (պարգևավճար) դրա ուղղակի օրենսդրական ձևակերպմանը, հանդիսանում են պետության կողմից տրվող սոցիալական աջակցություն, որոնք ամենևին պայմանավորված չեն այդ սուբյեկտների և պետության՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու կամ նախկինում նման հարաբերությունների մեջ գտնված լինելու հանգամանքով: Որոշ դեպքերում որոշակի աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելը՝ այդ թվում նաև պետության հետ, սուբյեկտին ընդամենը դարձնում է որոշմամբ սահմանված աջակցությունը ստանալու «շահառու»: Հայցվորը, նախկինում աշխատելով ՀՀ պաշտպանության նախարարությունում, ունենալով կենսաթոշակի իրավունք և հանդիսանալով մարտական գործողությունների մասնակից, դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ որոշմամբ իրեն հասանելիք պարգևավճարը (Դատարանի գնահատմամբ՝ սոցիալական աջակցությունը) ստանալու նպատակով և ստացել է մերժում: Ուստի, հայցվորի պահանջը չի ներառվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխով կարգավորվող՝ «Առանձին աշխատանքային վեճերով վարույթը» վերտառությամբ աշխատանքային վեճերի քննության ենթակա գործերի շարքում[5]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ հայցադիմումի

[4] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

առարկան կազմող հիմնական պահանջը վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարությանը հայցվորին չվճարված պարգևավճարը վճարելուն պարտավորեցնելուն, որպիսի պահանջը հայցվորը հիմնավորում է այն հանգամանքով, որ վերջինս, ծառայելով ԽՍՀՄ զինված ուժերում, մասնակցել է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը և Լեռնային Ղարաբաղի տարածքում մարտական գործողություններին, որը հիմք է, ՀՀ Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշման համաձայն, վերջինիս պարգևավճար վճարելու համար: Հարկ է նշել, որ ՀՀ Կառավարության նշված որոշումը վերաբերում է արդեն իսկ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձանց, մինչդեռ զինվորական կենսաթոշակի անցնելու հիմքով՝ հայցվորի և ՀՀ պաշտպանության նախարարության միջև ավարտվել են աշխատանքային իրավահարաբերությունները, որպիսի փաստի հաշվառմամբ՝ արդեն իսկ կենսաթոշակի անցնելուց հետո սույն գործով կողմերի միջև ծագած վեճը չի կարող ընդգրկվել աշխատանքային վեճերի շարքում և քննության առնվել ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից:

Հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

12. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/0717/05/25 գործն ըստ Արտակ Գալստյանի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, հրաման ընդունելուն՝ Արտակ Մերուժանի Գալստյանին ամբողջ չվճարված տարիների ընթացքում՝ սկսած 2014 թվականի մայիսի 19-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 2-ը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության և Լեռնային Ղարաբաղի տարածքում մարտական գործողությունների մասնակիցների համար սահմանված պարգևավճարը՝ ամսական՝ 5,000 ՀՀ դրամի չափով, ընդհանուր՝ 580,000 ՀՀ դրամը, հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, Արտակ Գալստյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/0717/05/25 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/0717/05/25 գործն ըստ Արտակ Գալստյանի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն, հրաման ընդունելուն՝ Արտակ Մերուժանի Գալստյանին ամբողջ չվճարված տարիների ընթացքում՝ սկսած 2014 թվականի մայիսի 19-ից մինչև 2023 թվականի սեպտեմբերի 2-ը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության և Լեռնային Ղարաբաղի տարածքում մարտական գործողությունների մասնակիցների համար սահմանված պարգևավճարը՝ ամսական՝ 5,000 ՀՀ դրամի չափով, ընդհանուր՝ 580,000 ՀՀ դրամը, հաշվարկելուն և վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐԹՈՒՐ ՊՈՂՈՍՅԱՆ